ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ (591—629)

ԷԴՈՒԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հայաստանի 591 թ. բյուզանդա-իրանական բաժանման մասին աղբյուրների հաղորդումները անհրաժեշտ է ուսումնասիրել ինչպես նոր սահմանագծի առանձին հատվածների, այնպես էլ Արևելյան Հայաստանի տարածքային կազմի լուսաբանման առումով։ Հայ պատմիչները մանրամասն թվարկում են Բյուզանդիային անցած և Իրանի գերիշխանության տակ մնացած տարածքները։ Սեբեոսը երկու անգամ անդրադարձել է այդ հարցին։ Խոսրով Փարվեզը (591—628 թթ.) խոստանում էր Մավրիկիոս կայսրին (582—602 թթ.) տալ «զկողմանս Ասորւոց-զԱրուաստանն ամենայն մինչև ի Մծբին քաղաք, և յերկրէն Հայոց՝ զաշխարհն Տանուտերական իշխանութեանն մինչև ցԱյրարատ և ցԴուին քաղաք, և մինչև ցեղր ծովուն Բղնունեաց և ցԱռեստաւան. և զմեծ մասն Վրաց աշխարհին՝ մինչև ցՏփխիս քաղաք»[1]։ Դահին հաստատվելուց հետո Խոսրովը «ետ նոցա զԱրուաստան զամենայն մինչև ցՄծբին, և զերկիրն Հայոց. որ ընդ իւրով իշխանութեամբն էր, զտունն Տանուտերական մինչև ցգետն Հուրազդան, և զգաւառն Կոտէից մինչև ցաւանն Գառնի և ցեղր ծովուն Բղնունեաց, և ցԱռեստաւան և զԴոզովիտ գաւառ մինչև ցՀացին և ցՄակուս։ Եւ կողմն Վասպուրական գնդին էր ի ծառայութիւն Պարսից արքային։ Եւ ի նախարարացն Հայոց բազումք ի Ցունաց կողմանէ և սակաւք՝ ի Պարսից։ Եւ և զմեծ մասն Վրաց աշխարհին մինչև ցՏփխիս քաղաք»[2]։

«Մինչև ցԱյրարատ և ցԴուին», «մինչև ցգետն Հրազդան», «զգաւառն Կոտէից մինչև ցաւանն Գառնի» հասկացությունները վերաբերում են Բյուզանդիային անցած «Տանուտերական իշխանության աշխարհի» արևելյան նոր սահմանագծին։ Դվին մնաց պարսից տիրապետության տակ։ «Տանուտերական տունը» չի հակադրվում Կոտայքին, ինչպես առաջին հայացքից կարող է թվալ։ Այլապես կհետևի, թե պատմիչը մի դեպքում «Տանուտերական տան» տարածքում նշում է մինչև Դվին ընկած հողերը (դրանց մեջ Հրազդան գետից արևելք, բնականաբար, մտնում էր նաև Կոտայքը), իսկ մյուս դեպքում՝ մինչև Հրազդան, որից հետո սկսվում էր Կոտայքը։ Սահմանագծի այս հատվածի մասին հետևյալ կարծիքներն են հայտնվել. «Կայսրությանն անցավ պարսկական Հայաստանի ամբողջ արևմտյան կեսը, ընդ որում, Գառնին Կոտայքում կազմում էր սահմանագծի վերին կետը»[3], «Սահմանագիծը դառնում էր Կոտեից գավառը՝ Հրազդան գետի և նրա ձախ օժանդակ գծով, Ազատ գետը»[4], «...Գեղամա լեռներ—Ազատ գետ—Արքա

---

1 «Պատմութիւն Սեբէոսի», աշխատասիրությամբ Գ. Վ. Արզարյանի, Երևան, 1979, էջ 76։ Հույն հեղինակ Թեոփիլակտոսի հաղորդման համաձայն Խոսրովը խոստանում էր վերադարձնել Մարտիրոպոլիսը, անհատույց զիջել Դարան և հրաժարվել Հայաստանից («Theopnylacti Simocattae Historiae". Ed. C. de Boor, Ed. correct. P. Wirth, Stuttgart, 1972, IV 13. 24)։ Հայտնի է, որ Մարտիրոպոլիսը (Նփրկերտ) գտնվում էր Հայաստանում, սակայն նվաճողների համար այն իր ռազմաստրատեգիական նշանակությամբ այնքան կարևոր էր, որ առանձին է հիշատակվում։ Հյուսիսային Միջագետքում նոր սահմանն անցնում էր կայսրությանն անցած Դարայի մոտակայքով։ Այդ բաժանման մասին մի հայ քաղկեդոնականի գրվածքում կարդում ենք. «Սա (Խոսրովը—Է. Դ.) ամբողջ Հայաստանը մինչև Դվին տվեց Մավրիկիոս կայսեր, որի համար նրա կողմից արքա դարձավ» (տե՛ս Հ. Բարթիկյան, «Narratio de rebus Armeniae», հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի քաղկեդոնականի սկզբնաղբյուր, «Բանբեր Մատենադարանի», 1962, № 6, էջ 466)։

2 Սեբեոս, էջ 84։

3 Н. Адонц. Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, с. 232.

4 Լեո, Երկերի ժողովածու, հ. Բ, Երևան, 1967, էջ 219։

գետ...»5, «591 թ. բաժանումը, ինչպես Սերեոսն ու Հովհաննես կաթողիկոսն են նկարագրում,. Բյուզանդիային տեր դարձրեց Հայաստանի ամբողջ արևմտյան ու կենտրոնական նահանգներին՝ մինչև Հրազդան գետը և Պարսկաստանի հպատակության տակ թողեց միայն հյուսիսարևելյան նահանգները՝ Սյունիք, Արցախ, Ուտիք, Շարուրը՝ Դվինի հետ, հարավ-արևելքում Վասպուրական գավառը»6, «Դվին—Ազատ գետ—Գառնի—Հրազդան գծից արևմուտք ընկած հողերը» անցան կայսրությանը7, «նոր սահմանագծի հյուսիսում սահման պետք է ընդունել ոչ թե Հրազդանը, այլ Ազատ գետը և սրա վերին հոսանքի աջ ափին գտնվող Գառնի ավանը։ Կոտայք գավառը դարձել է բյուզանդական, իսկ Ոստան Հայոց գավառը մնացել պարսկական»8։

Անհրաժեշտ է հիշել, որ Հրազդանից ձախ տեղադրված էին Այրարատ նահանգի ոչ միայն Կոտայք, այլև վերջինից հյուսիս՝ Մաղաղ գավառները9։ Ուստի, կարծել, թե Կոտայքը Հրազդան գետով էր սահման կազմում կամ սահմանագիծը ուղղակի Հրազդան—Գառնի—Ազատ գծով նշելը կարող է թյուրիմացություն առաջացնել։ Այդ դեպքում հաշվի չի առնվի Հրազդան և Ազատ գետերի միջև ընկած տարածքը, և դրանից կհետևի, թե այդ գետերը միևնույն բնական գծի վրա էին գտնվում, այնինչ դրանց միջև ընկած է Կոտայքը։ Նկատի ունենալով նաև Հովհաննես Դրասխանակերտցու («Իսկ մեծ հայրապետն Աբրահամ ըստ նախասաց բանին ի Դվին քաղաքի բնակէր ի Պարսից բաժնի անդ. վասն զի գետն Ազատ զսահման բաժնիցն երկոցունց ընդ մէջ հատանէր»10) և Արսեն Սափարէցու («Ազատ գետն, որ է սահման պարսից»11) հաղորդումները, կարելի է եզրակացնել, որ բյուզանդա-իրանական սահմանագիծն այս հատվածն անցնում էր Հրազդանի վերին հոսանքի երկարությամբ, այնուհետև Մաղազի և Կոտայքի գավառասահմանով հեռանում էր Հրազդանից և հասնում մինչև Գեղամաղան լեռան լանջերը, այնտեղից Կոտայքի արևելյան գավառասահմանով հասնում էր Ազատ գետի ավազանի վերին մասում գտնվող Գառնի ավանը։ Մաղաղը մնաց Արևելյան Հայաստանի կազմում, Ազատ գետը սահման դարձավ12։

---

5 Թ. Խ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968, էջ 115։

6 Բ. Ա. Ուլուբաբյան, Դրվագներ. Հայոց Արևելից կողմանց պատմության, Երևան, 1981, էջ 256։

7 Բ. Հ. Հարությունյան, Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը ըստ «Աշխարհացույց»-ի [«Բանբեր Երևանի համալսարանի», 1983, № 3 (այսուհետև ԲԵՀ), էջ 132]։

8 Վ. Կ. Իսկանյան, Մարզպանական Հայաստանը VI դարում (տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. Բ, Երևան, 1984, էջ 265)։ Բյուզանդա-իրանական սահմանագիծն իր հյուսիսային հատվածում Սևանի ավազանի հյուսիս-արևելյան մասից Լոփնաս (Աղստև) և Զորագետ գետերի ավազաններով հասնում էր մինչև Կուր գետի հովիտը, այնուհետև այնտեղից հեռանալով, ձգվում էր մինչև Աղանդոն (Թերեք) գետի հովտի վերին շրջանը, որտեղ բնակվում էին ծանարները (Նույն տեղում, «Հայաստանը և հարևան երկրները 591—653 թթ.» քարտեզը, հեղ.՝ Ս. Տ. Երեմյան։ Թերեք գետի հնագույն անվանումների և ծանարների ցեղի մասին տե՛ս Г. Г. Мкртумян, Грузинское феодальное княжество Кахети в VIII—XI вв. и его взаимоотношения с Арменией, Ереван, 1983, с. 34—35)։

9 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 60, 64։

10 «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց», ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1853, էջ 42։

11 Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 43։ Տե՛ս նաև Հ. Բարթիկյան, նշվ. աշխ., էջ 467։

12 Հայաստանի հաջվին խոսրովի՝ Մամբրիկիոսին գրված հողերի թվում Դրասխանակերտցին և Վարդան Արևելցին հիշատակում են. «և յերկուցն ևս գաւառաց, որ է Մասեացոտն և կողմն Արագածու» (Հովհաննես Դրասխանակերտի, էջ 39, «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 59)։ Ենթադրվել է, որ Դրասխանակերտցու բնադրում եղել է «Արագածու կողմն» (ԲԵՀ, էջ 132), սակայն հաշվի չի առնվել Վարդանի հաղորդումը։ Արևելյան Հայաստանի կազմում Մասյացոտնի մնալու մասին կարող է վկայել այն փաստը, որ Քրիստափոր կաթողիկոսը (628—630), կարգից գրկվելուց հետո Մասյացոտնում՝ Ուղեաց գյուղի մոտ մենարան կառուցեց և այնտեղ էր բնակվում (Հովհաննես Դրասխանակերտի, էջ 44, (Վարդան, էջ 62, Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, 1959, էջ 682)։ Նշենք, որ «կողմն» բառի իմաստներն են. «կողմ, գաւառ, երկիր, կող, կողքին, եզերքը»

Հացյունից և Մակուից հետո սահմանագիծը անցնում էր Կոգովիտի հարավային գավառասահմանով և, թեքվելով հարավ-արևմտյան ուղղությամբ, հասնում էր «ցեղը ծովուն Բզնունեաց, և ցԱռեստաւան»։ Ուշագրավ է, որ Սեբեոսը սահմանագիծը (Սևան և Վան լճերի միջև ընկած հատվածում) նախ նկարագրում է հյուսիսից հարավ (մինչև Գառնի), այնուհետև՝ հարավից հյուսիս (Վանա լճից մինչև Մակու)։ Ուստի, Կոգովիտից հետո սահմանագիծը հասնում էր Առեստավանին և Վանա լճին, որից հարավ-արևմուտք այն անցնում էր Ընձաքիսար լեռան մոտակայքով, Մոկքի արևմտյան եզրագծով և Ջերմ գետի ստորին հոսանքի շրջանով։

Ն. Ադոնցի կարծիքով Տանուտերական երկիրը մինչև 591 թ. համապատասխանել է մարզպանական Հայաստանի տարածքին[13]։ Ս. Երեմյանը համամիտ է Ն. Ադոնցին և գրում է, որ 482—484 թթ.[14] ապստամբության հաջող ելքից հետո Վահան Մամիկոնյանը դառնում է երկրի՝ նախարարների ու ժողովրդի կողմից ճանաչված կառավարիչը, և այդ ժամանակից սկսած, ի տարբերություն բյուզանդական Հայաստանի, մարզպանական Հայաստանը դարձավ «Տանուտերական երկիր», իսկ Դվինը՝ նրա մայրաքաղաքը[15]։ «Տանուտերական իշխանության երկիր» հասկացությունը (իր տարբերակներով) առաջին անգամ հիշատակել է Սեբեոսը։ Ուրեմն, չնայած այն գոյություն է ունեցել նախքան 591 թ., սակայն առաջին անգամ գրանցվել է VII դարի աղբյուրներում, այն էլ այն առիթով, երբ դրա տարածքը նշվում է կրճատված՝ Բյուզանդիայի կողմից նոր նվաճված հայկական հողերի սահմաններում։ Մավրիկիոսը իր նախորդների ժամանակ կայսրության կողմից նվաճված հայկական հողերը վերախմբավորեց, իսկ նոր զավթած հողերը բաժանեց երեք խոշոր նահանգների. «Մեծ Հայք», «Խորագոյն Հայք» և «Ներքսագոյն Հայք»[16], որոնք համապատասխանում էին «Տանուտերական իշխանության երկրի» տարածքային նոր վիճակին 591 թ. բաժանումից հետո[17]։ Եթե մինչ բաժանումը այն համապատասխանել է մարզպանական Հայաստանի տարածքին, ապա դրանից հետո Տանուտիրական երկրի մի մասը մնացել էր պարսից տիրապետության տակ։ Այդ մասը կազմում էին Այրարատ նահանգի հարավ-արևելյան վերոհիշյալ հատվածը, Վասպուրականը, Մոկքը, Պարսկահայքը, Սյունիքը և հարակից հողերը[18]։

(Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան, 1973, էջ 621)։ Տվյալ դեպքում «կողմն Արագածոտ» կարող էր նշանակել «Արագածոտն գավառի եզերքը»։ Արագածոտն գավառի տարածքի հիմնական մասն անցել էր կայսրությանը, իսկ Մասյացոտն գավառին հարող ծայր հարավային հատվածը կարող էր մնացած լինել Իրանի տիրապետության տակ գտնվող Արևելյան Հայաստանի կազմում։ Ուրեմն, Դրասխանակերտցու և Վարդանի հաղորդումները հաշվի առնելու դեպքում կհետևի, որ սահմանագիծը Ազատի և Արաքսի գետախառնուրդից թեքվում էր հյուսիս-արևմուտք և վերջինիս հովտով հասնում էր Արագածոտն գավառի եզերքը, այնուհետև, շրջվելով հարավ և հարավ-արևելք, անցնում էր Մասյացոտնի ու Կոգովիտի սահմանով և հասնում մինչև Արտազ գավառի Հացյուն ու Մակու բնակավայրերը։

13 Н. Адонц, նշվ. աշխ., էջ 231—232։

14 Հմմտ. Կ. Նուզարյան, Ե՞րբ է սկսվել Վահան Մամիկոնյանի գլխավորած ապստամբությունը [«Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև ՊԲՀ), 1984, № 1, էջ 95—101]։

15 «Հայ ժողովրդի պատմություն», հ. Բ, էջ 205։

16 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 40։ Մավրիկիոսը ստեղծել էր «Վերին Միջագետք կամ Չորրորդ Հայք» (կենտրոնը՝ Ամիդ) և «այլ Չորրորդ Հայք» (կենտրոնը՝ Դարիմ) նահանգները (տե՛ս Н. Адонц, նշվ. աշխ., էջ 234)։ Թ. Հակոբյանը այլ կարծիքի է. «Արևմտյան Հայաստանում կողք կողքի գոյություն ունեին երկու Չորրորդ Հայքեր՝ իսկական Չորրորդ Հայք և Հյուսիսային Միջագետքը կամ Մյուս Չորրորդ Հայքը։ Առաջինի վարչական կենտրոնը, ինչպես տեսանք, Մարտիրուպոլիսն էր..., իսկ երկրորդինը՝ Ամիդը» (Թ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 115)։

17 Տե՛ս «Հայաստանը և հարևան երկրները 591—653 թթ.» քարտեզը, հեղ.՝ Ս. Տ. Երեմյան («Հայ ժողովրդի պատմություն», հ. Բ)։

18 Կարծիք է հայտնվել, որ «Վասպուրական գնդի» կամ «Վասպուրական երկիր» անունը կրող Հայոց մարզպանության Իրանի տիրապետության տակ մնացած հատվածը շատ ավելի ընդարձակ էր, քան Մեծ Հայքի Վասպուրական աշխարհը (ՊԲՀ, էջ 137)։ Անհրաժեշտ է նշել, որ, եթե «կողմն Վասպուրական գնդին» և «կողմն Սեպհական գնդին» համարժեք են (Թ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 141—145) և Սեբեոսը Դվինը

Արևելյան Հայաստանը, որը պարսից տիրապետության տակ էր մնացել, նվաճողների պառակտիչ քաղաքականության հետևանքով իր հերթին մի քանի մասերի էր բաժանված։ Դրանցից յուրաքանչյուրն ընդգրկված էր տարբեր բնույթի տարածքային միավորների մեջ։ 572 թ. ապստամբության նախօրեին Սյունիքը դուրս եկավ Դվինում նստող պարսից մարզպան Սուրենի (ապստամբության ժամանակ հայերը նրան սպանեցին) ենթակայությունից և Վահան Սյունեցին խնդրեց նոսրով արքային, «զի տարցեն զդիւան աշխարհին Սիւնեաց ի Դրնայ ի Փայտակարան քաղաք, և կարդեսցէ զքաղաք ի շահրմար Ատրպատականի»[19]։ Սյունիքից արևելք դրանվում են Ուտիք և Արցախ[20] հայկական նահանգները, ուստի, Վահան Սյունեցու քայլը, որը փաստորեն ուղղված էր պարսից մարզպանի դեմ (այլ ոչ թե «մի ես կոչեսցի անուն Հայոց ի վերայ նոցա», քանի որ այստեղից կարելի է նաև հասկանալ, որ նա մարզպանության կազմից դուրս էր բերում իր երկրամասը), այնուամենայնիվ, իր բացասական հետևանքներն ունեցավ համահայաստանյան շահերի համար. 1) 572 թ. ապստամբությունից դուրս մնաց Սյունիքը, որը հզորություն էր ներկայացնում, 2) քաղաքականապես և տնտեսապես, թեկուզ և ժամանակավորապես, Հայաստանի կենտրոնական շրջանների կապը կտրվում էր իր արևելյան երկրամասերից[21], Սակայն VII դ. 40—50-ական թվականներին Սյունիքը ևս հանդես եկավ Թեոդորոս Ռշտունու դրոշի տակ որպես հայկական հողերի վերամիավորման և հայկական պետության վերականգնման համար նրա մղած պայքարի կարևոր ուժերից մեկը[22]։

591 թ. հետո հայոց մարզպանության կենտրոնը շարունակեց մնալ Դվինը։ Սեբեոսի հաղորդումներից հետևում է, որ Դվինում նստող սահմանակալները և մարզպանները VI դ. վերջում և VII դ. առաջին երկու տասնամյակներում պարսիկներ էին[23]. «Եւ այս են սահմանակալք տէրու-

---

հիշատակում է «կողմն Սեպհական գնդին» հասկացությունից առանձին (Սեբեոս, էջ 166), ուրեմն, դժվար է ասել, թե «Վասպուրական գնդի» տարածքի մեջ մտնում էին նաև Այրարատի արևելյան հատվածի գավառները, Մոկքը, Գարսկահայքը և այլն, ինչպես այդ անում է Բ. Հարությունյանը։ Մ. Հովհաննեսյանը սխալ է քննադատում Թ. Ավդալբեգյանին, նշելով, որ «Սեպհական գունդին կողմը պետք է հասկանալ Դվինի և շրջակայքի համար» (Մ. Հովհաննեսյան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 900)։ Կարծում ենք, որ Սեբեոսի շարադրանքից չի բխում, թե «Վասպուրական գունդը» համարժեք էր Հայկական մարզպանության տարածքին (591 թ. բաժանումից հետո)։ Այն զբաղեցնում էր մարզպանության մեծ մասը, ուստի, Սեբեոսը բյուզանդա-իրանական սահմանից արևելք ընկած Հայաստանի տարածքը անվանում է «կողմն Վասպուրական գնդին»։

19 Սեբեոս, էջ 67—68։

20 Անանիա Շիրակացին Ուտիքի կազմում հիշատակում է Առան-ոստ, Տրի, Ռոտ-Գարսյան, Աղվե, Տուս-Քուստակ, Գարդման, Շակաշէն, Ուտի առանձնակ գավառները։ Արցախը, ըստ Անանիա Շիրակացու, պարունակում էր Մյուս Հարանդ, Վայկունիք, Բերդաձոր, Մեծ Առանք, Մեծկվենք, Հարճլանք, Մուխանք, Գիանք, Գածկանք, Սիսական ի Կոտակ, Քուստ ի Փառնես, Կողթ [Մատենադարան Մխիթարյանց, Վենետիկ, Ձեռ. № 1245, Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 109, Հ. Ս. Սվազյան, «Աղվանից աշխարհ» հասկացությունը ըստ Մովսես Կաղանկատվացու («Բանբեր Հայաստանի արխիվների», 1973, № 1, էջ 231—233), Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 34—39, Նույնի՝ Խաչենի իշխանությունը X—XVI դարերում, Երևան, 1975, էջ 30—38]։

21 Հմմտ. Բ. Ուլուբաբյան, Դրվագներ Հայոց արևելից կողմանց պատմության, էջ 200—201։

22 Սեբեոս, էջ 166, 173։ Անանիա Շիրակացին VII դ. Սյունիքի կազմում հիշատակում է հետևյալ գավառները. Երնջակ, Ճահուկ, Վայոց ձոր (Եղեղնաձոր), Գեղաքունի, Սոդք, Աղահեճք, Ծղուկ, Հարանդ, Բաղք, Ձորք, Արևիք, Կովսական (տե՛ս Ս. Տ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 109, 117)։

23 Այս տեսակետից պարզ է, թե ինչու այդ ժամանակաշրջանում Սյունիքի իշխանությունը շարունակեց մնալ Հայաստանի մարզպանական մասից դուրս։ Սյունիքը մարզպան չուներ և կառավարվում էր սեփական իշխանների կողմից (Հ. Ադոնց, նշվ. աշխ., էջ 221)։ Սյունիքը փաստորեն միակ հայոց իշխանությունն էր այդ ժամանակաշրջանում, որը ինքնիշխան էր դարձել և իր հարաբերությունները Իրանի հետ կառուցում էր Ատրպատականի մայրաքաղաք Գանձակում նստող Քուստ-ի-Կապկոհ սպայապետության փոխարքայի միջոցով, առանց մարզպանի միջամտության։

թեանն Պարսից յամս հաշտութեան այնորիկ ի Հայաստան երկրի և ի Դուին քաղաք։ Վնգատական, Նիխորական... Ապա Մերկուտ. ապա Ցազգէն, ապա Բուտմահ. ապա Ցեմանն...»[24]։ Սմբատ Բագրատունու Հայաստանում գտնվելու (607 թ.) և նրա նախաձեռնությամբ Դվինի սբ. Գրիգոր եկեղեցու վերակառուցման կապակցությամբ Սեբեոսը հիշատակում է մի մարզպանի, որը, փորձելով խափանել շինարարական աշխատանքները[25], բերդակալի հետ ամբաստանության գիր էր գրել արքային։ Ստ. Մալխասյանցը նշել է, որ Դվինի այդ մարզպանը պարսիկ էր, հավանաբար Ցեմանը[26]։ Սեբեոսի հաշորդ շարադրանքից հայտնի է դառնում. «Եւ յոստանն Դրնայ եկն մարզպանութեանն Շահրայեանպետ...։ Եւ յոստանն Դրնայ եկն փոխանակ Շահրայեանպետի Պարսեանպետ, Պարշընազդատ ապա Նամդար Վշնասպ. ապա Շահրապդական... ապա Բոռճ Վեհան»[27]։ Նրանք և՛ զորավարներ էին, և՛ մարզպաններ։ Ուստի հարկ չկա կարծելու, թե Հայաստանի մարզպանը 591—617 թթ. եղել է Սմբատ Բագրատունին[28], որը, իրականում, Վրկան երկրամասի մարզպանն էր՝ կարգված Խոսրով Փարվեզի կողմից[29]։

Կարծում ենք, որ մարզպանական Հայաստանը տարածքով համարժեք չէր Վասպուրական գնդին այն պարզ պատճառով, որ հայ պատմիչները հանվանե հիշատակում են այն հողերը, որոնք Այրարատի կազմից մնացին պարսից տիրապետության տակ։ Կարելի է ասել նաև, որ «կողմն Սեպհական գնդին» և «կողմն Վասպուրական գնդին» միանգամից չեն դարձել իրար համարժեք։ «Աշխարհացույց»-ի Վասպուրական աշխարհը համապատասխանել է դրանց տարածական ընդարձակման առավելագույն փուլին։ Վասպուրականի՝ որպես աշխարհի, գաղափարը 591 թ. հետո ոչ թե մեռավ. ինչպես կարծիք է հայտնվել[30], այլ իր հասունացման փուլը թևակոխեց։ Թ. Ավդալբեգյանը իրավացի է, երբ Սեբեոսի հիշատակած «կողմն Սեպհական գնդին» հասկացությունը նույնացնում է «կողմն Վասպուրական գնդին» հետ։ Գիտնականը սրանց լրիվ համազոր է համարում նաև Փավստոս Բուզանդի հիշատակած «սեփական գունդը»[31]։ Եթե դա ճիշտ է, ուրեմն, խոսքը կարող է լինել Վանա լճից հյուսիս-արևելք ընկած Արշակունյաց տան սեպուհների երկրամասից[32] հավաքագրված զորագնդի մասին։ Ի դեպ, երբ Մովսես Խորենացին գրում է Հաշտյանք, Աղիովիտ և Առբերանի գավառների՝ Արշակունի սեպուհների տիրույթների մասին, այնուհետև պատմում է, որ Երախնավու Անձևացու մոտ Տիրանը թողել էր իր մերձավորներից Դրուասպ պարսիկին, որը «խնամիացել էր ընդ նախարարս Վասպուրականի, որում տուեալ էր զաւանն Տատեոնս հանդերձ ազարակօքն»[33]։ Տատեոն ավանը գտնվում էր Ծաղկոտն գավառում, որը սահմանակից էր Աղիովիտ և Առբերանի գավառների Արշակունյաց սեպուհների տիրույթներին։

---

24 Սեբեոս, էջ 105։

25 Նույն տեղում, էջ 100։

26 «История епископа Себеоса», перев. Ст. Малхасянца, Ереван, 1939, с. 161—162, прим. 109. Այստեղ առկա է տպագրական վրիպակ։ Գրված է՝ «марзпан Арменак, перс», այնինչ պիտի լիներ՝ «марзпан Арменин, перс», քանի որ այնուհետև կարդում ենք Ցեման մարզպանի մասին։

27 Սեբեոս, էջ 111, 113։

28 А. Тер-Гевондян, Армения и Арабский халифат, Ереван, 1977, с. 19.

29 Սեբեոս, էջ 96, 98, 101։

30 ԲԵՀ, հտ 137։

31 «Փավստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1832, էջ 375—376։

32 Ս. Երեմյանը գրում է, որ Աղիովիտ և Առբերանի գավառների տարածքում Արշակունյաց տան սեպուհների բնակավայրը կոչվում էր «Սեպուհ[ր]հական» կամ «Վասպուրական», «երկիրն սեպհական գնդին»։ 591 թ. հետո Վասպուրական անունը տարածվեց այն տարածքի վրա, որը «Աշխարհացույց»-ում հայտնի է այդ անունով (Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 33)։ Ս. Երեմյանը, ի տարբերություն Ն. Ադոնցի [«Հռոմեացիներին տանուտերական հողի մի մասի անցումից հետո, Վասպուրական էր նշանակում պարսիկներին մնացած մասը ի տարբերություն հռոմեականի» (Н. Адонц, նշվ. աշխ., էջ 232)], իրավացիորեն կարծում է, որ Վասպուրական անունը կրող տարածքը իր սահմաններով չգերազանցեց «Աշխարհացույց»-ի Վասպուրական աշխարհին։ Այնինքն, այն համարժեք չէր մարզպանության տարածքին։

33 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», Տփխիս, 1913, էջ 194։

Ինչպես նշում է Հր. Աճառյանը, «սեպհական (սեփական, սեփհական)» բառը «առանձնական, իւրական, իրեն պատկանած, տէր եղած» նշանակությամբ ծագել է «սեպուհ» բառից[34]։ Արդյո՞ք Փավստոսի հիշատակած «սեփական գունդ» արտահայտությունը պարունակում էր «սեպուհական գունդ» իմաստը։ Չէ՞որ վերջինս համապատասխանում էր Արշակունյաց տան սեպուհների գավառներից հավաքագրված գնդին։ Ինչպե՞ս կարող էր սեպուհների գունդը հայտնվել դավաճան Մերուժան Արծրունու հրամանատարության ներքո։ Կարծում ենք, որ Փավստոս Բուզանդի հիշատակած «սեփական գունդը» պատմաաշխարհագրական հասկացություն չէ, այլ միայն պարունակում է «իրեն պատկանած, առանձնական» (այսինքն՝ Մերուժանին պատկանող) գունդ իմաստը, չնայած, բառը սկզբնապես կարող էր ծագած լինել «սեպուհ»-ից։ Անկախ այս ամենից, պետք է ընդունել, որ Արշակունյաց տան սեպուհների՝ Վանա լճից հյուսիս-արևելք զբաղեցրած տարածքում (Աղիովիտ և Առբերանի գավառներ) են ձևավորվել «Սեպհական գունդ», «Վասպուրական գունդ» հասկացությունները, որոնք ընկած են «Վասպուրական աշխարհ» պատմաաշխարհագրական հասկացության հիմքում։

Անանիա Շիրակացու հիշատակած Վասպուրական աշխարհն իր գավառներով համապատասխանում է VI դ. վերջի և առավել ևս VII դ. 30—40-ական թվականների քաղաքական իրավիճակին։ «Աշխարհացույցում» հիշատակված հայոց տասնհինգ աշխարհներն իրենց մեջ բովանդակում են Հայաստանի ամրողջական տարածքը պատմական տարբեր փուլերում, սկսած հնագույն ժամանակներից։ Անանիա Շիրակացին ժամանակակից էր հայոց պետականության և Հայաստանի ամբողջականության վերականգնման ուղղությամբ սկսված պատմական պրոցեսին, ուստի, իր «Աշխարհացույց»-ում գրանցել է պատմաաշխարհագրական կարգի բոլոր այն մանրամասնությունները, որոնք հայոց պետական գործիչներին կարող էին ուղեցույց լինել Հայաստանի ամբողջական տարածքի վերականգնման գործում։

Այս տեսակետից «Վասպուրական աշխարհը Շիրակացու ժամանակին ավելի մոտ կանգնած իրողություն է։ Եթե «Աշխարհացույց»-ը լիներ V դարի գործ[35], ապա նրանում ամենայն մանրամասնությամբ նկարագրված Վասպուրական աշխարհը չէր կարող չարտացոլվել դարիս աղբյուրներում։ Ավելին, V դարի հայ պատմիչները այն կազմող գավառներից մի քանիսը հիշատակում են, սակայն Վասպուրական աշխարհը՝ ոչ։ «Աշխարհացույցում», ինչպես հայտնի է, նաև այնպիսի մանրամասնություններ են առկա, որոնք վերաբերում են VI—VII դդ.։ Վասպուրական աշխարհի V դ. գոյություն ունեցած լինելու օգտին կարծիք է հայտնվել, թե հնում «Վասպուրականի տարածքում Մարգպետականից բացի գոյություն է ունեցել մեկ այլ վարչական շրջան», որի տարածքը «ընդգրկում էր մինչև Նախճավան գավառը և Կոտոր կամ Կարմիր գետը ընկած շրջանները», և «այլ խոսքով, Արևմտյան Վասպուրականը համաձայն Պտղոմեոսի հանդիսացել է առանձին վարչական շրջան և կոչվել է Տոսպ կամ Տոսպք իր գլխավոր գավառի անունով»[36]։ Բայց չէ որ այս կարծիքի հեղինակին հայտնի է, որ «Տոսպը տարածվում էր Վան քաղաքի շրջանում»[37]։ Ավելին, չնայած Բ. Հարությունյանը Տոսպի և շրջակա գավառների կապակցությամբ հիշատակում է Ն. Ադոնցի և Ս. Երեմյանի աշխատությունները, սակայն Տոսպի տարածքը (որի մասին Բ. Հարությունյանը գրում է. «իր մեջ ներառնելով Գուկանքի ամրոցի արևելակողմից մինչև Մարմետ գետն ընկած տարածքը») ավելի ընդարձակ է ներկայացնում, իսկ Բոգունիքի մասին նշում է. «զբաղեցնում էր Մարմետ գետի ստորին հոսանքի շրջանը»[38]։ Ըստ Ն. Ադոնցի և Ս. Երեմյանի, Տոսպը զբաղեցնում էր Վան (հնում՝ Տուշպա) քաղաքի շրջակայքը[39]։ Ն. Ադոնցը, հիմք ընդունելով Ղեոնդի և Թովմա Արծրունու հաղորդումները, Գուկան գավառը համադրել է Ռշտունիքի Գուկան գյուղի հետ, իսկ Արտաշիսյանը տեղադրել է Վանա լճից ոչ հեռու[40]։ Ս. Երեմյանը նշում է, որ Գուկանք գավառը գտնվում էր Հայոց ձորի այժմյան Գյուղանց գյուղի շրջակայքում, իսկ Արտաշիսյանը՝ այժմյան Արտամետի շրջանում[41]։ Ըստ Ս. Երեմյանի վերականգնած «Աշխարհա-

---

34 Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Երևան, 1979, էջ 202։

35 Բեշ, էջ 118—119։

36 Նույն տեղում, էջ 119։

37 Նույն տեղում, էջ 112։

38 Նույն տեղում։

39 Н. Адонц, նշվ. աշխ., էջ 315, Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 82։

40 Н. Адонц, նշվ. աշխ., էջ 318։

41 Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 41, 48։

ցոյց»-ի քարտեզի, Տոսպի և Գուկանքի միջև ընկած էր Արտաշիսյանը, իսկ Տոսպի սահմանագիծը արևելքից մինչև Մարմետ գետը չէր հասնում։ Տոսպի հյուսիսային սահմանը կազմում էր ոչ թե Մարմետ գետը, այլ Բոգունիք գավառը[42], որը, ըստ Ս. Երեմյանի առաջարկած տեղադրության, գտնվում էր Մարմետ գետի ստորին հոսանքի ձորահովտում[43]։ Հայտնի է, որ Տոսպ անունը ծագել է Տուշպա (Վան) անունից։ Սարգուրե Ա-ն (840—825 թթ. մ. թ. ա.) մոտ 840 թ. մ. թ. ա. կառուցեց Տուշպա (հետագայում Տոսպ, Վան) մայրաքաղաքը, որի անունը փորագրված է Վանի քարաժայռի վրա[44]։ Այդ անունով Ստրաբոնը հիշատակել է Վանա լիճը (Strabo. XI. 14. 8)։ Պտղոմեոսը, Տոսպը (Ptol. V. 12. 3) հիշատակելով, նկատի է ունեցել հենց Վան քաղաքը և դրա շրջակայքը, ուստի, ոչ մի հիմք չկա այն համապատասխան համարելու «Արևմտյան Վասպուրականին», որը, վերոհիշյալ տարածքային առումով, մոտ քսան անգամ մեծ էր իրական Տոսպի տարածքից։

Վասպուրականի գավառացանկում հանդիպում է Բառիլովիտ (Աղովիտ, Աղավիս) գավառանունը, որի կապակցությամբ նշված է. «Բառիլովիտ-Բառիլովիտ հնարավոր է տեղադրել միայն Մարմետ գետի վերին հոսանքի շրջանում, որը ուրարտական շրջանում հավանաբար կոչվել է Բարելե կամ Բարիլե։ Չի բացառվում, որ այդ անունը կրել է Մարմետ գետը իր վերին հոսանքի շրջանում»։ Ժխտելով Ս. Երեմյանի տեսակետը[45], Բ. Հարությունյանը գրում է. «Վասպուրական աշխարհում Աղովիտ գավառ գոյություն չի ունեցել»[46]։ Այն, որ Ս. Երեմյանը չի հիշատակում «Աշխարհացույց»-ում և Թովմա Արծրունու երկում տեղ գտած Բառիլովիտ անվանումը, դեռևս չի նշանակում, որ Աղովիտ ընթերցվածը պետք է դուրս նետել։ Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այդպիսի ընթերցում հանդիպում է Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի № 2370 ձեռագրում, որը «Աշխարհացույց»-ի լավագույն ձեռագրերից է, ինչպես երևում է թեկուզ Առաջին, Երկրորդ և Երրորդ Հայքերի նկարագրությունից։ Կարծելով, թե ինչ-որ մի ձեռագրում Բառիլովիտ գավառանունը ընկալվել է որպես «Բ Աղովիտ»[47], ինչպե՞ս կարելի է պատկերացնել այդ անցումը, եթե, օրինակ, հիշված ձեռագրում գրանցվել է միայն «Աղովիտ»-ը։

Եթե նկատի ունենանք, որ սեպագիր աղբյուրներում Բարելե կամ Բարիլե երկրի կամ գավառի հիշատակություն չկա, ապա պարզ կդառնա Բ. Հարությունյանի առաջարկած տեղադրության թերի լինելը։ Ավելին, նա գտնում է, որ «այդ անունը կրել է Մարմետ գետը իր վերին հոսանքի շրջանում»[48]։ Սակայն իրեն հայտնի է, որ Մարմետ գետի հինավուրց անունը եղել է Ալլյուրիա, որը «կապվում է Բոգունիք գավառի Ալլյուր գյուղանվան հետ»[49]։ Ուրեմն, ըստ հետազոտողի, Ալլյուրիան Մարմետ գետի հինավուրց անունն էր, և միաժամանակ այն իր վերին հոսանքի շրջանում կրել է Բարելե ենթադրելի անունը։ Վասպուրականի Կուղանովիտ, Գառնի, Առբերանի, Անձևացիք գավառների տեղադրության կապակցությամբ[50] Բ. Հարությունյանի հոդ-

---

42 Ինչպե՞ս կարող էր Տոսպը տարածվել մինչև Մարմետ գետն ընկած տարածքը, եթե Մարմետի ստորին հոսանքի շրջանում գտնվում էր Բոգունիքը։ Մարմետի միջին հոսանքի ձորահովտում Պալունիք գավառն էր Մեծնունիք գավառի հարևանությամբ (Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 70, 76)։

43 Նույն տեղում, էջ 45։

44 «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հ. 1, Երևան, 1981, էջ 39—40 (հեղ. Հ. Կարագյոզյան)։

45 Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 33։

46 ԲԵՀ, էջ 113—114։

47 Նույն տեղում։

48 Նույն տեղում, էջ 113։

49 Նույն տեղում, էջ 114։

50 Ս. Երեմյանը Կուղանովիտը տեղադրում է ներկայիս Կելան-դարասի կոչվող ձորահովտում։ Գիտնականը Խոշաբի աշկողմյան վերին վտակը նշում է Կուղան անվամբ, որից պարզ երևում է, որ խոսքը Կալլանիա գետի մասին է, ուստի, հարկ չկա փնտրելու այդ անվան նախնական ընթերցումը Կոլլան ձևով, ինչպես այդ անում է Բ. Հարությունյանը, նկատի ունենալով Պտղոմեոսի հիշատակած kollis վայրը, որի վրա ժամանակին ուշադրություն է դարձրել Ս. Երեմյանը, ենթադրելով, որ այդ գավառի հնագույն անվանաձևն է Կուղխանովիտը (էջ 61)։ Գառնին և Առբերանին տեղադրվում են Վանա լճից հյուսիս-արևելք, իսկ Անձևացիքը Ջերմ գետի ակունքների շրջանում (Հ. Ադոնց, նշվ. աշխ., էջ 316, Ա. Երեմյան, նշվ. աշխ., էջ 36—37, 46)։

վածում առարկություններ չկան։ Տրպատունիքի[51] և Բուն Մարդաստանի առումով. սակայն, այլ է վիճակը։

Ն. Ադոնցի և Ս. Երեմյանի կարծիքներում բավականին տարբերություններ կան Տրպատունիքի, Բուժունիքի և Առնոյ-ոտնի տեղադրությունների հետ կապված։ Նրանք Անձևացիքը տեղադրում են միևնույն կերպ, սակայն ըստ Ն. Ադոնցի, Բուժունիքը և Առնոյ-ոտնը գտնվում էին Անձևացիքից հարավ, իսկ Տրպատունիքը՝ հյուսիս, Երվանդունիքի հարևանությամբ։ Այնինչ, Ս. Երեմյանը Բուժունիքը և Առնոյ-ոտնը տեղադրում է Անձևացիքից հյուսիս-արևմուտք և արևմուտք, իսկ Տրպատունիքը՝ հարավ-արևմուտք։ Բ. Հարությունյանը Բուժունիքի և Առնոյ-ոտնի կապակցությամբ ընդունում է Ս. Երեմյանի տեսակետը, իսկ Տրպատունիքի կապակցությամբ՝ Ն. Ադոնցի։ Ն. Ադոնցը Բուն Մարդաստանի մասին տեղյակ է[52] (Թովմա Արծրունու երկից), սակայն դրա տեղադրությունը չի կատարել։ Բ. Հարությունյանը Ս. Երեմյանի առաջարկած Բուն Մարդաստանի տեղադրության տարածքում նշել է Տրպատունիքը, գրելով, որ «Աշխարհացույցը» չի մոռացել Բուն Մարդաստան գավառը, այլ տվել է նրա մեկ այլ անվանումը՝ Տրպատունիք[53]։ Կարծում ենք, որ հետազոտության այսպիսի եղանակով հնարավոր չէ ժխտել Ս. Երեմյանի առաջարկած տեղադրությունը Տրպատունիքի վերաբերյալ։

Մարդաստանի տեղադրության հարցում Ն. Ադոնցը գտնում է, որ այն տարածվում էր Արճակ կամ Արճիշակ լճից մինչև Արտաղ[54]։ Ս. Երեմյանը Մարդաստանը (Մարդուցայքը) տեղադրում է Մակու քաղաքից արևմուտք, Վասպուրականի (Կոտուրի) լեռների արևելյան փեշերին[55]։ Արճիշակովիտ գավառը գտնվում էր նույնանուն լճի ավազանում։

Վասպուրականի Ակե գավառը Ն. Ադոնցը տեղադրել է (Մեծ) Աղբակից հարավ[56]։ Ս. Երեմյանը ավելացնում է, որ Ակե գավառի անունը աղերսվում է Ականիս անվան հետ[57]։ Թովմա Արծրունու երկում հանդիպող «Ակէտամբեր» ընթերցվածը կարելի է գրչական միացման արդյունք համարել[58]։

Վասպուրականի Թոռնավան գավառի տեղադրության հարցում Բ. Հարությունյանը որոշակի դժվարությունների առաջ է կանգնել, դրա տեղում նշելով Բառիլովիտը։ Հետազոտողը ուշադիր չի եղել Ն. Ադոնցի աշխատությունը ընթերցելիս և նրան անհիմն կերպով մեղադրել է իրարամերժ կարծիքներ հայտնելու մեջ։ «Ն. Ադոնցը,— նշում է Բ. Հարությունյանը,— անդրադառնալով Թոռնավանի և Նկանի տեղադրությանը, գրում է, որ Թոռնավանը (Ն. Ադոնցի մոտ՝ Тонраван) Նկան ամրոցով, որը համապատասխանում է Նագան գյուղին, գտնվել է Կոտուրից արևելք։ Սակայն նույն էջում 1 ծանոթագրության մեջ նա հայտնում է իրարամերժ կարծիք, ըստ որի Նկանի տեղադրությունը հիմք է ծառայում, որպեսզի Թոռնավանը տեղափոխվի Արաքսի համակարգից, ուր տեղադրում է Հ. Հյուրշմանը, Վանա լճի ավազանը։ Այլ խոսքով, ծանոթագրության մեջ արդեն փորձում է Նկանը տեղադրել Կոտուրից արևմուտք ընկած հատվածում»[59]։

---

51 Ըստ Ն. Ադոնցի, Տրպատունիքը տեղադրված էր Անձևացիքի և Երվանդունիքի միջև, իսկ Բուժունիքը և Առնոյ-ոտնը՝ Անձևացիքից հարավ, ընդ որում Բուժունիքը և Անձևացիքը նա տեղադրում է Արևելյան Տիգրիսի վերին հոսանքի շրջանում (Н. Адонц, նշվ. աշխ., էջ 316)։ Ս. Երեմյանը Տրպատունիքը տեղադրում է Զերմ գետի (Արևելյան Տիգրիս) վտակ Շարուր-սուի հովտում, իսկ Բուժունիքը՝ Սուրբ Տիկին կամ Սև Տիկին գետակի ձորահովտում, Շատախից հյուսիս։ Բուժունիքից հարավ-արևմուտք գտնվում էր Առնոյ-ոտն գավառը (Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 37, 45, 86)։

52 Н. Адонц, նշվ. աշխ., էջ 318։

53 ՊԵՀ, էջ 114։

54 Սեբեոսի հիշատակած Մարդուցայքի հետ Մարդաստանը առաջինը նույնացրել է Ն. Ադոնցը (Н. Адонц, նշվ. աշխ., էջ 316, 319, 417)։

55 Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 65։

56 Մեծ Աղբակի (Մեծ Զար գետի վերին հոսանքի կամ Աղբակ գետի ավազանում) և Անձախիձորի (Ընծայինք, Կոտոր գետի վերին հոսանքի շրջանում) տեղադրությունների հարցում Ն. Ադոնցի (Н. Адонц, նշվ. աշխ., էջ 316, 317) և Ս. Երեմյանի (Ս. Երեմյան, նշվ աշխ., էջ 33, 36) կարծիքները համընկնում են։

57 Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 32։

58 Այս միացումը կասկածի տեղիք է տվել, սակայն հետազոտողը (ՊԵՀ, էջ 115), այնուամենայնիվ, եկել է Ս. Երեմյանի տեսակետին։

59 Բ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 115։

Ն. Ադոնցի դրքի 317-րդ էջում տպագրված է. «к востоку от Котора», սակայն Բ. Հարությունյանը պարտավոր էր հաշվի առնել ականավոր հայագետի գրքի վերջում ուղղումների ցուցակում կատարված նշումը, ըստ որի 317-րդ էջի երկրորդ տողի վրիպակը անհրաժեշտ է ուղղել. «к западу от Котора»[60]։ Ն. Ադոնցի շարադրանքում հետազոտողի նշած առումով ոչ մի հակասություն գոյություն չունի։ Բ. Հարությունյանը ժխտում է նաև Ս. Երեմյանի տեսակետը Թոռնավանը Մարմետ գետի վերին հոսանքում տեղադրելու կապակցությամբ և այն տեղադրում է Ճուաշի ավազանի արևմտյան մասում, Թոռնավանի կազմում նշելով նաև Աղանդ-ռոտ գետի ավազանը[61]։ Այդ եզրահանգմանը նա գալիս է ելնելով «ի Ճուաշ եւ ի Թոռնաւան», «զՃուաշ գաւառն եւ զԹոռնաւան», «զԹոռնաւան, եւ Ճուաշ գաւառք» հիշատակություններից[62]։ Սակայն դրանցից կարելի է միայն եզրակացնել, որ Թոռնավանը և Ճուաշը հարևան գավառներ էին։ Թովմա Արծրունին գրում է. «Իսկ Պարսկահայոց գունահն խուժան ածեալ... զան հասանեն ի Մարդաստան գաւառ յաւանն Վիտահոտ հանեն զսուր, վարեն ի գերութիւն, եւ առնուն աւար, եւ ի յանցին դառնան ի Ճուաշ եւ Թոռնաւան գաւառ, անցեալ ընդ Կրճունեաց գաւառն։ Եւ վարեն ի գերութիւն աւարառութեամբ զԼեկ, եւ զԱղզի, եւ զԿրերեացն, եւ ի Ճախուկ գաւառէ»[63]։ Բ. Հարությունյանը այս հաղորդումից եզրակացնում է. «Թշնամիները, ասպատակելով Մարդաստանը և գերեվարելով Լեկը, Աղզին, Կրերիքը և Ճահուկը, վերադարձին Կրճունիքի վրայով անցնում են Ճուաշ և Թոռնավան։ Անձախիձորից քիչ հյուսիս գտնվում է Կուրշան-գյադուկ լեռնանցքը, որը հինավուրց Կրճունիքի լեռնանցքն է, որի վրայով էլ թշնամին մտել է Ճուաշ և Թոռնավան»[64]։ Սակայն Թովմա Արծրունու վերոհիշյալ տեքստը այլ բովանդակություն է պարունակում։ Մարդաստանից վերադարձնալիս թշնամին անցել է Ճուաշ և Թոռնավան, այնուհետև Կրճունյաց գավառներով։ Թշնամու հրոսակները դրանից հետո գերեվարել և ավարառել են Լեկ, Աղզի, Կրերեաց և Ճահուկ գավառներում, որոնք համապատասխանաբար գտնվում էին Վասպուրականի հարավում և Կորճայքում։ Այնտեղից թշնամին գնաց Պարսկահայք նախ Թրարի գավառը, այնուհետև՝ Արասխ գավառի Շնող քաղաքը, որը Հայաստանի հարավային սահմանի մոտ էր գտնվում, Ուրմիա լճից հարավ-արևմուտք։ Ըստ Բ. Հարությունյանի, ստացվում է հակառակը. նա կարծում է, որ Լեկից, Աղզիից, Կրերիքից և Ճահուկից հետո թշնամին Կրճունիքի վրայով մտավ Ճուաշ և այնուհետև Թոռնավան։

Բ. Հարությունյանը գրում է, որ Աղանդ-ռոտ գավառի տեղադրությունը ոչ մի դժվարություն չի ներկայացնում, որովհետև «գավառանունը պահպանվել է Կարմիր կամ Կոտոր գետի ձախափնյա վտակ Ալյանդ-դերեի կամ Ալյանդ-չայի անվան մեջ»[65]։ Ալյանդ-չայը Աղանդ-ռոտ գետի օտարալեզու անվանումն է։ Իսկ չէ՞ որ հետազոտողը Աղանդ-ռոտի ավազանը նշում է Թոռնավանի կազմում։ Ուրեմն, ըստ նրա ստացվում է, որ Աղանդ-ռոտի ավազանը Թոռնավանի մի մասն էր կազմում, և միևնույն ժամանակ այդտեղ էր տեղադրված Աղանդ-ռոտ գավառը։ Նման շփոթությունը արդասիք է այն հանգամանքի, որ Բառիզովիտ-Աղիովիտի հարցը չպարզած՝ Բ. Հարությունյանը այն տեղադրում է Ս. Երեմյանի նշած Թոռնավանի տեղում, իսկ Թոռ-

60 Н. Адонц, նշվ. աշխ., էջ 526։

61 Բ. Հարությունյանը այն կարծիքին է, որ Ճուաշ-ռոտ գետի ավազանը բաժանված է արևելյան և արևմտյան մասերի, որոնք տնտեսական և ֆիզիկաաշխարհագրական ամբողջություն չեն կազմում (ԲՆՀ, էջ 117)։ Նշենք, որ Ճուաշ գետը, բացի իր վերին մասից (այստեղ նրա ուղղությունը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք է), հոսում է արևմուտքից արևելք, ուստի, խոսք կարող է լինել հյուսիսային և հարավային հատվածների մասին։ Ճուաշ գետի կիրճով անցրպետվող երկու լեռնարգելները փաստորեն գտնվում են այդ գետի աջ և ձախ ափերին։ Այդ ավազանով անցնող ճանապարհները կապում էին հյուսիսային՝ ձախափնյա և հարավային՝ աջափնյա մասերը։ Ճուաշ-ռոտ գավառի տարածքը լեռնային դժվարամատչելի շրջան է (ամբողջությամբ վերցված), ինչպես բնորոշ է Հայաստանի բոլոր լեռնային գավառներին։

62 «Պատմութիւն տանն Արծրունեաց ի Թովմայ վարդապետէ Արծրունւոյ», Կոստանդնուպոլիս, 1852, էջ 219, 282, 291, 303։ Հ. Հյուբշմանը գտնում է, որ Վասպուրականի Թոռնավան գավառանունը կապված է Թոռն-Թոռնիկ անվան հետ (Հ. Հյուբշման, Հին հայոց տեղոյ անունները, Վիեննա, 1907, էջ 349)։ Հավանական է, որ Թոռնիկ անունը Մամիկոնյաններին անցել էր VIII դ. երկրորդ քառորդից, երբ նրանք մի առ ժամանակ հայտնվել էին Վասպուրականում։ Իսկ Թոռնավան գավառանունը պետք է հնագույն ծագում ունենա։

63 Թովմա Արծրունի, էջ 291։

64 ԲՆՀ, էջ 117։

65 Նույն տեղում, էջ 121։

նավանը[66] նա ստիպված է լինում տեղադրել վերոհիշյալ տարածքում։ Ս. Երեմյանը Ճուաշ-ռոտ գավառը տեղադրում է Նույնանուն գետի ընդարձակ հովտում, Աղանդ-ռոտը Նույնանուն գետի հովտում, մինչև Նվարսակը[67], Կրճունիքը՝ Կոտոր գետի ակունքների շրջանում, Մարանդը՝ Կարմիր գետի[68] աջ վտակ Մարանդի ավազանում, Գուկանը՝ Խոշաբ գետի ստորին հոսանքի շրջանում, Գարիթյանը՝ Ուրմիա լճից հյուսիս-արևելք։

Քննադատելով Բասորպեդան Վասպուրականի հետ նույնացնող գիտնականների տեսակետը, Բ. Հարությունյանը հետևում է Հ. Հյուբշմանի և Ս. Երեմյանի կարծիքին։ Սակայն նա ժխտում է Բասորպեդան Պարսպատունիքի հետ նույնացնելու և վերջինս այժմյան Ղարադաղում տեղադրելու մասին Ս. Երեմյանի տեսակետը։ Ըստ Բ. Հարությունյանի, Պարսպատունիքը գտնվում էր Հերից արևմուտք, Կոտորի ավազանում տեղադրված գոգահովտում և «ավելի շատ վերաբերելու էր Անձախիձորին»։ Նա նշում է, որ Բասորպեդան համապատասխանում է Պարսահայք (Պարսկահայք) աշխարհին[69]։ Նշենք, որ Ս. Պետրոսյանը հանգամանորեն վերլուծել է Պարսպատունիքի թե՛ ստուգաբանության և թե՛ տեղադրության հետ կապված հարցերը և ճիշտը համարել է Ս. Երեմյանի կարծիքը։ Ս. Պետրոսյանը, ելնելով կուսակալների մասին Մովսես Խորենացու հաղորդումից, գտնում է, որ կուսակալ-սահմանակալները կոչվում էին նաև իրանական համապատասխան տերմինով՝ «պարսպետ»։ Հեղինակը դրանից եզրակացնում է, որ այդ տերմինը պահպանվել է Պարսպատունիք տեղանվան մեջ, որը կարող էր ծագել որպես տոհմանուն (Պարսպատունի) ընկալված «պարսպատ» տիտղոսից[70]։

Բ. Հարությունյանը, նման զուգահեռներ անցկացնելով, չի ընդունում Ս. Երեմյանի առաջարկած Վարաժնունիքն տեղադրությունը (Սարխալան գետակի ձորում)[71] և այն դնում է Ջուլֆա—Մարանդ ճանապարհից արևելք։ Նա գրում է. «Արաքս գետից հարավ գտնվում է Լավարշան գետակի ավազանը համանուն բնակավայրով։ Ռուսական քարտեզներում այն հիշատակվում է Լուվարշան դրությամբ։ Կարծում ենք, որ Լավարշան անունը ծագում է արաբականացված Ալ-Վարշանից, իսկ վերջինս էլ հանդիսանում է Վարաժնունիքի տեղագրական հեռավոր արձագան-

---

66 Բ. Հարությունյանը գտնում է, որ «Աշխարհացույց»-ի մի շարք ձեռագրերում հանդիպող «Դուռնաւան տառընթերցումը» պատահական չէ։ Նա կարծում է, որ սկզբում եղել է «Թոռնաւան» բարբառային ձևը, իսկ հետագայում սրբագրվել է «Դուռնաւան», նշանակելով լեռնանցքի հարեվանությամբ գտնվող ավան։ «Քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով,— գրում է հետազոտողը,— ավանը կարող էր վերածվել գյուղի, որի հետևանքով բնակավայրը կստանար «Թոռն գիւղ» կամ «Գիւղ Թոռն» անունը։ Հեր գավառի անմիջապես սահմանի վրա Ճուաշ-ռոտ գետի ավազանի արևմտյան մասում մինչև այսօր լեռնանցքից ոչ շատ հեռու գոյություն ունի Գյուլդուր գյուղը, որը թերևս հին Թոռնավանն է» (ՊԲՀ, էջ 117)։ Նման սրբագրությամբ հնարավոր չէ ապացուցել Թոռնավանի տեղադրությունը։ Մանավանդ, որ Գյուլդուրը գտնվում է պատմական Աղանդ-ռոտ գավառի տարածքում։

67 Տե՛ս Ս. Երեմյան, նշվ. աշխ., քարտեզը և էջ 32, 53, 64։

68 Բ. Հարությունյանը Կոտոր կամ Կարմիր գետից արևելք ընկած շրջանում անորոշ ձևով տեղադրում է Արտաշիսյան գավառը, չհամաձայնելով Ս. Երեմյանի առաջարկած սրբագրության հետ («զԱրտաշիսեան, [որ է] Արտաանեան գաւառ»)։ Ս. Երեմյանը Արտաշիսյանը տեղադրում է այժմյան Արտամետի շրջակայքում (Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 41, 109)։

69 Բ. Հարությունյանը այդ ենթադրությունը անում է՝ Բասորպեդան «թարգմանելով որպես կիրճի ամրության լեռնադաշտ» (ՊԲՀ, էջ 122)։ Սակայն Անձախիձորում (Կոտոր գետի հովտում) աղբյուրները «Պաս» անվամբ ամրություն չեն հիշատակում։ Ինչպե՞ս է հետազոտողը «Բասորպեդան» և «Պարսահայքը» («Պարսկահայքը») անունների երկրորդ մասերն իրար նույնացնում, եթե մեկը նշանակում է «լեռնադաշտ», իսկ մյուսը «Հայք»։

70 Ս. Գ. Պետրոսյան, Փայտակարանը և Պարսպատունիքը I դ. երրորդ քառորդում (ՊԲՀ, 1975, № 2, էջ 181—182)։

71 Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 82։ Այս հարցի կապակցությամբ Բ. Հարությունյանը Ե. Երեմյանին է վերագրում մի սրբագրություն, որի մասին գիտնականը մի առ անգամ չի գրել։ Իսկ Վ. Վարդանյանի՝ Թովմա Արծրունու տեքստում կատարած այդ սրբագրությունը («ընդ վարազիս»—«ընդ Վարաժնունիս») Բ. Հարությունյանը արգասիք է համարել Ս. Երեմյանի աշխատություններում գոյություն չունեցող այդ սրբագրության ազդեցության։

լրը[72]։ Արաբական աղբյուրներում Հայաստանի տարածքում Ալ-Վարչան տեղանուն չի հանդիպում։ Առավել ևս դժվար է պատկերացնել, որ գոյություն չունեցող անվանաձևը կարող էր հիմք հանդիսանալ Լավարշանի համար։ Եվ ընդհանրապես ի՞նչ կապ գոյություն ունի Լավարշանի և Վարաժնունիքի միջև։ Եթե ընդհանուր բնույթի դատողություններով ղեկավարվենք, ապա Վ. Վարդանյանի առաջարկած սրբագրությունը, թերևս, ավելի տրամաբանական է։

Բ. Հարությունյանը Կարմիր գետից և Ուրմիա լճից արևմուտք Վարաժնունիքի հետ տեղադրում է նաև Գաղրիկյանը և Տաղրյանը, առաջինի արձագանքը համարելով Զարգան գյուղանունը, իսկ երկրորդինը՝ Ջեգրեան[73]։ Ճիշտ է, հետազոտողը նշում է, որ իր տեղադրությունները խիստ թեական են, սակայն նա գերադասում է ապավինել դրանց, քան հետևել Ս. Երեմյանի տեսակետին, որը մեր կարծիքով, ավելի հիմնավոր է։ Ս. Երեմյանը Գաղրիկյանը ենթադրաբար տեղադրում է Տաբոն գետի (այժմ Զոլա-չայ) ակունքների շրջանում, որտեղ գտնվում է Կասրիկ գյուղը[74], իսկ Տայգրյանը՝ «Հանասորի լեռնանցքի և Աղբակ գետի միջև, որտեղ այս գավառի անունը հիշեցնում է Գեյգր վայրը» (հմմտ. Դարեհ Ա-ի Բիհիսթունի արձանագրության Tigra վայրը)[75]։

Ն. Ադոնցը, հենվելով Թովմա Արծրունու մի հաղորդման վրա, գրել է, որ Վասպուրականի մի մասը հնում կրել է մարդպետի անունը[76]։ Թովմայի այդ հաղորդումը համեմատելով Մովսես Խորենացու տեղեկության հետ՝ «Հայոց իշխանի» տիրույթների («Ատրպատականէ մինչև ցՇուաշ և ցՆախճավան»)[77] մասին, Բ. Հարությունյանը նշում է, որ նախապատվությունը պետք է տալ պատմահոր վկայությանը[78]։ Ելնելով իր այս եզրակացությունից, հետազոտողը Մարդպետականի տարածքը նշում է ըստ Խորենացու հաղորդման, իսկ Թովմայի հիշատակած գավառները փաստորեն համապատասխան է համարում Տոսպի տարածքին։ Սակայն Խորենացու և Արծրունու հաղորդումները տարբեր ժամանակաշրջանների են վերաբերում։ Պատմահայրը նշել է այն տարածքը, որը գտնվում էր «Մարաց ամուր աշխարհի» հարևանությամբ և, հանդիսանալով Հայաստանում մարդերի զբաղեցրած տարածքներից մեկը, ընկած էր Ատրպատականի հետ կաղմող սահմանի և Արաքսի գետահովտի միջև։ Այդ տարածքը դարձել էր «մարդպետության գործակալության» իշխանապետի սեփականությունը։ Այնուհետև Մարդպետականը (սկզբնապես, թերևս, զբաղեցրել է Մարանդի-Բաքանի և Գարիբյանի տարածքը) ընդարձակվել էր իր մեջ ներառնելով Թովմայի հիշատակած գավառները։ Այսինքն՝ Հայր Մարդպետի տիրույթները բրոնզագրավումների հետևանքով ընդարձակվել էին դեպի արևմուտք, հասնելով մինչև Տոսպ-Ռշտունիք, սակայն Տոսպը երբեք չի հասել մինչև Կարմիր գետը։ Ընդարձակումը պետք է տեղի ունենար Տիրանի ժամանակ, երբ Հայր Մարդպետը փորձեց ոչնչացնել Արծրունիների ամբողջ տոհմը։ Փրկված Շավասպը հետագայում ժառանգեց հոր կալվածքները[79]։ Ինչպես նշել է Ն. Ադոնցը, Ի դարում մարդպետների տոհմը այլևս գոյություն չուներ, իսկ հաղթանակած Արծրունիները նրանց տիրույթների հետ մեկտեղ ժառանգեցին մարդպետ տիտղոսը[80]։ Խորենացու հաղորդումից երևում է, որ Նախճավանը Մարդպետականի կազմում չէր։ Ելնելով Խորենացու և Ստ. Օրբելյանի հաղորդումներից[81], Բ. Հարությունյանը կարծիք է հայտնել, որ Գողթնը և Նախճավանը պետք է գտնվեին մեկ այլ վարչական միավորի՝ Սյունիք աշխարհի մեջ[82]։ Նշելով, որ Ն. Ադոնցը կաս-

---

72 Բեշ, էջ 125։

73 Նույն տեղում, էջ 124։

74 Բ. Հարությունյանը գրում է, որ Հարավային Վասպուրականում Կասրիկ անունով մի քանի բնակավայր կան և թե ինչո՞ւ է նախապատվությունը տրվել այդ մեկին։ Իսկ ինչո՞ւ պետք է ընդունել Զարգան գյուղանունը որպես Գաղրիկան գավառի անվան արձագանք, եթե ոչ միայն արտաքին, այլև ներքին՝ իմաստային կապ չկա դրանց միջև։

75 Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 84։

76 Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 319։

77 Մովսես Խորենացի, էջ 112։

78 Բեշ, էջ 118։

79 Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 319։

80 Նույն տեղում, էջ 320։

81 Մովսես Խորենացի, էջ 112, «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական», Մոսկվա, 1861, էջ 13։

82 Բեշ, էջ 126։

կածել է հիշյալ գավառների Վասպուրականին վերադրելուն, հետաքրքրողը դրել է. «Մեզ անհայտ պատճառներով արքունիքը վերոհիշյալ գավառները անշատել է Սյունիքից և մտցրել Մարզպետականի մեջ, որը վերջին հաշվով արքունի կալվածք էր։ Տրամաբանական է կարծել, որ նման վարչական փոփոխությունը նպատակ ուներ սահմանազատել արքունի կալվածքները Սյունյաց իշխանների ժառանգական տիրույթներից։ Եվ քանի որ Մարզպետական Ներքինի իշխանության տարածքը արքունի կալվածքների մի որոշակի ձև էր, աշխարհագրական տեսակետից արքունիքը նպատակահարմար է գտել նրանց կցել Գողթն և Նախճավան գավառները»[83]։

Հայոց արքունիքը Մեծ Հայքի թագավորության գոյության ժամանակաշրջանում մշտական պայքար է մղել կենտրոնախույս ուժերի դեմ և ամեն կերպ ջանացել է կենտրոնական ուժերի հսկողության տակ պահել հայոց հողերը։ Բ. Հարությունյանի նշած «անհայտ պատճառները» այդպես էլ չեն բացահայտվի, քանի որ ոչ մի տրամաբանություն չկա կարծելու, թե հայոց արքունիքը երբևիցե նպատակ է ունեցել արքունի կալվածքները Սյունիքից սահմանազատելու։ Եվ ընդհանրապես աղբյուրներից հայտնի չէ որևիցե փաստ, որը վկայեր, թե արքունիքը իրեն ենթակա որևիցե իշխանությունից գավառներ բռնագրավեր՝ դրանից սահմանազատվելու նպատակով։ Եթե նույնիսկ բռնագրավումներ եղել են (իսկ այդպիսիք իրոք եղել են), ապա դրանք կատարվել են այլ դրդապատճառների հետևանքով և ոչ թե «աշխարհագրական տեսակետից»։

Կարծել, թե Նախճավանն էլ է ինչ-որ ժամանակ եղել Սյունիքի կազմում, ուրեմն պետք է ենթադրել նաև, որ հայոց արքունիքը, երկրի պաշտպանության մասին հոգալով, հարավ-արևելքից դեպի կենտրոն եկող գլխավոր ճանապարհի վրա գտնվող Նախճավան և Գողթն գավառները ամրացրել, ստրատեգիական տեսակետից դրանց որոշ ինքնուրույնություն է շնորհել։ Ըստ երևույթին, այդ ուղիով է ընթացել Նախճավանի և Գողթնի անշատումը Սյունիքից և դրանց վերափոխումը արքունի կալվածքների։ Այնպես որ, հայոց արքունիքը Նախճավանով և Գողթնով ոչ թե սահմանազատվել է Սյունիքից, այլ դրանց տարածքում ստեղծել է երկրորդ պաշտպանական ամրացված գոտին հարավ-արևելքից ներխուժող թշնամիների դեմ (առաջինը, այդ ուղղության վրա անցնում էր Մարզպետականի հարավով և Գարսպատունիքով)։ Հայ Արշակունիների թագավորության անկումից հետո այդ գավառները մտել են Հայոց մարզպանության կազմի մեջ՝ Արևելյան Հայաստանի մյուս հողերի հետ մեկտեղ։ 571 թ. հետո Նախճավանը և Գողթնը շարունակեցին մնալ Հայոց մարզպանության կազմում և 591 թ. ընդգրկվեցին Վասպուրական գնդի մեջ։ այսինքն, դարձան Վասպուրական աշխարհի ամբողջացող տարածքի մասերը։ Հենց այս ժամանակաշրջանից այն հանում է իր ձևավորման Անանիա Շիրակացու «Աշխարհացույց»-ում արձանագրված փուլին։

Այսպիսով, Արևելյան Հայաստանը վարչաքաղաքական տեսակետից VI դ. վերջին տասնամյակում բաղկացած էր հետևյալ մասերից. Մարզպանական Հայաստան (ընդգրկում էր Բրանին մնացած Այրարատի արևելյան հատվածը և Վասպուրական գունդը, որն, ըստ «Աշխարհացույց»-ի, այս ժամանակաշրջանից արդեն համազոր էր դառնում Վասպուրական աշխարհին), Սյունիք, Ուտիք և Արցախ[84]։ VII դ. սկզբներին վերսկսված և որոշ ընդմիջումներով երկու տասնամյակից քիչ ավելի տևած բյուզանդա-իրանական պատերազմների հետևանքով Հայաստանը կրկին դարձավ ռազմական գործողությունների և արշավանքների թատերաբեմ։ Պարզ է, որ այդպիսի պայմաններում Հայաստանի թե՛ արևմտյան և թե՛ արևելյան մասերի մարշտարածքային վիճակը խախտվել էր։ Տարածքային նվաճումների առումով Իրանը Բյուզանդիայի նկատմամբ զգալի առավելության էր հասել։ Սակայն VII դ. 20-ական թվականներին կայսրությունն անցավ հակահարձակման, և Սասանյան Իրանի պարտությունը անխուսափելի դարձավ։ Բյուզանդիայի 628 թ. հաղթանակից հետո (629 թ.) «սահման հաստատեցաւ նոյն՝ որ առ Եփրատ և։ Մաւրկաւ հաստատեալ էր»[85]։ Այնուամենայնիվ, ժամանակները փոխվել էին, և Սասանյանների տիրապետությունը Արևելյան Հայաստանում կորցրել էր իր ուժը և շատով վնասված։ Վարազ-

---

83 Նույն տեղում։

84 Ուտիքում գտնվում էր «միւս» Տիգրանակերտը, իսկ Արցախում՝ Տիգրանակերտը։ (Ս ե բ ե ո ս, էջ 125)։ Վերջինիս տեղադրության մասին «Հայ ժողովրդի պատմության» Բ հատորիմեր շարադրած տեքստում տպագրված է. «Կուր գետի ձախափնյա մասում Եաշենագետ և Գարգար գետերի միջև» (գլ. XIII, էջ 298)։ Անհրաժեշտ ենք համարում տալ հետևյալ ուղղումը. «Կուր գետի աջափնյա վտակ Եաշենագետի և Արաքս գետի ձախափնյա վտակ Դարգարի միջև»։

85 Ս ե բ ե ո ս, էջ 131։

տիրոջ Բագրատունին, Դավիթ Սահարունին, Թեոդորոս Ռշտունին, վտանգելով իրենց կյանքը, քաղաքական ծանր պայմաններում անդուլ պայքար մղեցին հանուն հայկական հողերի վերամիավորման, Հայաստանի տարածքային ամբողջականության վերականգնման։

АДМИНИСТРАТИВНО-ТЕРРИТОРИАЛЬНОЕ ДЕЛЕНИЕ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ (591—629)

ЭДУАРД ДАНИЕЛЯН

Резюме

Восточная Армения в административно-политическом отношении состояла из марзпанской Армении (включала в себя оставшиеся после раздела 591 г. под владычеством Ирана часть Айрарата, Васпураканский гунд, который к тому времени территориально уже соответствовал Васпураканской области, описанной Ананием Ширакаци в «Ашхарацуйце»), Сюника, Утика и Арцаха.

Возобновление византийско-иранских военных действий в начале VII в. нарушило административно-территориальные и политические деления западной и восточной частей Армении. Византийско-иранская граница 591 г. была официально восстановлена в 629 г., после поражения (628 г.) Ирана, нанесенного Византией. Однако владычеству Сасанидов в Восточной Армении вскоре пришел конец. В тяжелых внешне- и внутриполитических условиях армянские государственные деятели Варазтироц Багратуни, Давид Сазруни и Теодорос Рштуни возглавили борьбу за восстановление территориальной целостности Армении.